

տակի գուճավոր շեռտերով, արել երկրաչափական զարդանախշեր՝ երկե-  
րես տեխնիկայով: Գորգերին հատուկ է եղել նշան նախշի յուրօրինակ  
պատկերառեսակ, որը կիրառվել է նաև կիրառական արվեստի մյուս մյու-  
ղերում: Գորգերը զարդարել են երկրաչափական, ոճավորված բուսական  
զարդանախշերով, թռչունների, կենդանիների պատկերներով: Գորգագոր-  
ծությամբ զբաղվել են հատկապես Ազուլիսում: Անհրաժեշտ թելը պատ-  
րաստել են ձմռանը: Ներկատներ կային, ուր ներկում էին բուսական,  
կենդանական ներկերով: Մեծ կիրառութուն են ունեցել տ ո ռ ո ն  
և ո ռ ղ ա ն կ ար մ ի ռ ներկերը: Որպես ներկատու օգտագոր-  
ծել են թթենու տերևը, կեղևը, քնկուզենու տերևը և այլ բույսեր:

8. Ազուլիսում եղել են հախճապակեգործներ, որոնք պատրաստել  
են աղաման, թաս, սափորիկ և այլ առարկաներ: XVII դ. մի քանի քն-  
տանիք Ազուլիսից և Յղևայից գաղթել են Ջյոթահիա և այնտեղ շարու-  
նակել հախճապակեգործութունը: Այդ մասին ուշագրավ տեղեկութուն-  
ներ են տալիս Արշակ Ակոյաժյանը, ինչպես նաև Կոմիտասը, որի պա-  
պերը նույնպես գաղթած են եղել Յղևայից:

9. Գողթն գավառի հյուսն վարպետները պատրաստել են բնայարանի  
պատի տարբեր չափի պահառանների փորագրագարդ ղոներ, օրորոց, սեն-  
յակի առաստաղը պատելու ձևավոր տախտակիկներ, ցորենի, ալյուրի պա-  
հառան-ամբար, հացատան սյուների փորագրագարդ, արձանագրված խո-  
յակներ և այլն:

10. Գողթնին բնորոշ արհեստները, զբաղմունքի տեսակները հարա-  
տևել են մինչև XIX դ. վերջը, որոշ մյուղեր՝ մինչև XX դ. սկիզ-  
բը: Նուլի, Ջարաթալա, Թբիլիսի, Իրևան և այլ քաղաքներ տեղափոխ-  
վելու հետևանքով, աստիճանաբար քայքայվեց տեղական արհեստագործու-  
թյունը: Բնակչության թե տարածք, թե զբաղմունքի որոշ տեսակներ  
հարատևեցին նրանց նոր բնակության վայրերում, մինչև 1920-1930-  
ական թթ.:

Վ.Վ.ԱՎԵՏՅԱՆ  
ՀՄԻ

ՆՈՐՈՒՅԹՆԵՐ

Մ.թ.Ա. III - I ՀԱՁԱՐԱՄՑԱԿՆԵՐԻ ԹԱՂԱՄԱ ԾԻՍԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ  
/ԸՍՏԱ ԼՈՁԱՇՆՆԻ ԿԵՂՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ/

Հանրահայտ են ԼՈՁԱՇՆՆԻ հին հուշարձանները, որոնցից հայտնա-

բերված նյութերը ժամանակաշրջանի քննարկումով, առատությամբ, բազմազանությամբ և ինքնատիպությամբ զուգահեռներ չունեն ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի բրոնզեդարյան հուշարձանների մշակութային արժեքների մեջ: Լինելով Կուր-Արաքսյան մշակութային լուսավեներոններից մեկը՝ Լժաշենը հնագիտությանը տվել է նյութերի այնպիսի համալիրներ, որոնք արտացոլում են Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. - հազարամյակների սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառները՝ որոշակի պատկերացում տալով նրանց զարգացման հաջորդական փուլերի մասին:

Պեղումներով ի հայտ եկած նոր երևույթներն ավելի են քնդլայնում մեր պատկերացումների շրջանակը նախնադարյան հասարակության սովորութային չափանիշների և ծիսական կարգի վերաբերյալ:

Լժաշենի դամբարանադաշտի քիչ ուսումնասիրված 2-րդ և 3-րդ տեղամասերի ոչ ծավալուն պեղումներից հայտնաբերված նյութերն ունեն հետևյալ նկարագիրը.

1. Գետնափոսային դամբարանում թաղված երկու երեխայի գանգի հետ ի հայտ է եկել կարմրագույն խեցեղեն /3-րդ տեղամաս, նո. 2 դամբարան/:

2. Երեխայի առանձին թաղում, որի հետ 54 մանր և 12 խոշոր եղջերավոր կենդանու մանր, որոնք, քստ երևույթին, վկայում են երեխայի պատվին զոհաբերած կենդանիների փաստը /2-րդ տեղամաս, նո. 54 կրոմլեխ/:

3. Մարմինը մասերի բաժանված կռեկտիվ թաղում՝ 6 մարդու /3-րդ տեղամաս, նո. 2 գետնափոսային դամբարան/:

4. Կրկնակի թաղում, որից մեկի /ստորին շերտի/ գերեզմանափոսք փորված է մանր ավազի բարակ շերտերի մեջ:

Այս երևույթը վկայում է, որ Լժաշենի դամբարանադաշտը շատ ավելի վաղ՝ մինչև այդտեղ թաղումներ կատարելը, դարձյալ գտնվել է ջրի տակ: Նման փաստ է նկատվել նաև 1-ին տեղամասի նո. նո. 7, 8, 14, 40, 43 դամբարանների գերեզմանափոսքի կառուցվածքներում /2-րդ տեղամաս, նո. 51 դամբարան/:

5. Թաղման նոր ձև. դամբարանափոսում թաղվածի զլխի կողմում պատվանդանաձև /գերեզմանի հատակից 40 սմ բարձրությամբ/ քարե կառույց՝ վրան մեծ կավաման /2-րդ տեղամաս, նո. նո. 47, 48, 50 կրոմլեխներ/:

Բերված փաստերի վերաբերյալ նյութերը չեն հրատարակվել, պեղումները կատարել է տղերիս հեղինակը 1979-1983 թթ.: Այս մասին շատ հակիրճ հիշատակված է , Գործնական աշխատանքներ հնագիտություն-

Յյուսկից, մեթոդական ձեռնարկում /Երևան, 1983/, որ տպագրել ենք  
բուհական ուսանողութան համար:

Գ.Ե.ԱՐԵՇԱՆ

ԵՊՀ

ՅՈՒՆԵՍԿՈ ԿՈՄԻՏԵ, ԴԱՐՄԱՆԱԲԱՆՈՒԿԻ ԳԱՎԱԾԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ

ՀՈՐԻՆՎԱՅԵԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ

1. Ծախչայի սարահարթում Բ.Ա.Կուժտինի ղեկավարութեամբ կա-  
տարված պեղումների ցնթագրում /1937 թ./ V, «Զորուխթաշ», դամ-  
բանաբլրից հայտնաբերվել է պատկերային հորինվածքով արծաթե գա-  
վաթ: Դամբանաբլուրը թվագրվում է մ.թ.ա. XVIII - XVII դդ., ուս-  
տի նույն ժամանակաշրջանին կամ նրան նախորդող դարերին պետք է  
վերագրել նաև գավաթը, որը, հայտնաբերման օրվանից սկսած, զրա-  
վել է քաղմամբիվ հետազոտողների ուշադրությունը:

2. Գավաթը դրսից պատված է դրվագված պատկերներից կազմված  
երկու ծոփորով, որոնք լրացվել են փորագրված մանրամասներով:  
Ստորին ծոփորում պատկերված են քայլող եղջերուներ՝ հինգ արու  
և չորս էգ: Վերին ծոփորը ներկայացնում է ծառի տակ նստած մար-  
դակերպ աստվածուհիան ծիսական խնջույքը: Աստվածուհուները հե-  
ղուկ է քմպում երկփող գավաթից և իր սեղանից կերակրում զահի  
առջև պառկած երկու գայլին /կամ շներին/: Սեղանի կողքին պատ-  
կերված է սրբազան հեղուկի անոթը, իսկ զահի ոտքերի տակ մորթի  
է փռված: Դիմացից աստվածուհուները մոտենում է 23 մարդակերպ է-  
ակներից կազմված շարքը, ձեռքերին բռնած միտոսսակ երկփող գա-  
վաթներ: Արարողութան ըուրը մասնակիցները միտոսսակ հագուստ  
են կրում, իսկ ղեմերը ծածկված են գայլակերպ ղիմակներով: Եր-  
թում պատկերված յուրաքանչյուր էակի հագուստին գայլի պոչ է ամ-  
րացված, որից գուրկ է նստած աստվածուհուները:

3. Զորուխթաշի գավաթն ուսումնասիրողները /Բ.Ա.Կուժտին, Պ.  
Ն.Ուշակով, Շ.Յա.Ամիրանաշվիլի, Վ.Վ.Բարդավելիձե և ուրիշներ /  
դրա պատկերներում ղիտել են՝ որսի աստվածուհուան, ինչպես նաև  
/կամ/ պողաբերութան պաշտամուների հետ կապված ծիսակատարու-  
թյուն: Վերջերս այդ պատկերահորինվածքը մեկնաբանվել է որպես  
,,կյանք-մահ, ղիցաբանական պարբերաշրջանի առասպելություններից  
մեկի արտացոլում /Բ.Տ.Բերիաշվիլի, Ջ.Ն.Սխիրթլաձե/, որը, ըստ